

կծկուժով մը: Խոնարհակողմին վրայ պատերը զարգարուած են յենորմներով կամ անխոյակ սիւններով, որ կը կրեն խոշոր պսակ մը: Չորս անկիւններու սիւները երկու կողմով 2.75 մ. լայնութիւն ունին: Ամէն տեղ պատերը ունին 2.50 մ. թանձրութիւն մը, մէջն ըլլալով յենորմները և արեւելեան փողոցին հաւասարութեան վրայ 12 մէթր միջին բարձրութեան մը կը հասնին:

Արաբները հին շինութեան վրայ բարձրացուցած են 3-4 մ. բարձր ժանեոր պատ մը և իւրաքանչիւր անկեան քովը մինարէ մը շինած են. կը մնայ միայն հարաւային-արեւելք և հիւսիսային-արեւմուտք: Հիւսիսային և հարաւային կողմերը սանդուխով մը կը մտնեն Հարամ, որուն մուտքը սակայն խտիւ արգելուած է անոնց՝ որ իսլամ չեն: Բայց թոյլ կը տրուի քրիստոնէից և հրէից հարաւային սանդուխէն յառաջանալ մինչև վեց աստիճան, ուր կը հանգիպին քարի մէջ նեղ բացուածքի մը, ուր կ'ըսեն թէ կը տարածուի մինչև Աբրահամի գերեզմանը: Հոս է որ՝ առ նուազն գէթ հինգ զարերէ ի վեր՝ Իսրայելացիները կ'երթան ամէն ուրբաթ իրիկուն ողբ ընելու, ինչպէս կ'ողբան երուսաղէմի Լացի Պաւլին առջև:

Պորտոյի ուխտաւորը արդէն այցելեց «հրաշալի գեղեցկութեամբ ուղղանկիւն քարէ յիշատակարանի մը՝ ուր կը հանգչին Աբրահամ, Իսահակ եւ Յակոբ, Սառա, Ռեբեկա և Լիա»: Յովսեպոս այս նահապետներուն վրայ խօսած ժամանակ, նմանապէս կը գրէ. «Տակաւին կը տեսնուի այս միւսնոյն քաղաքին մէջ գեղեցիկ արուեստով մարմարէ շինուած յիշատակարանները»: Հսկայական քարէ զանգուածները ունին մարմարի գեղեցկութիւնը և «տակաւին այսօր կը տես-